



13.01.2022թ.  
Հ/Ա-2023/002

ՀՀ տարածքային կառավարման և  
ենթակառուցվածքների նախարարի  
տեղակալ Հ. Հարությունյանին

Հարգելի պարոն Հարությունյան

Ի պատասխան Ձեր 23.12.2022 N ՀՀ/26.1/35063-2022 գրության, հայտնում ենք, որ «Լիդիան Արմենիա» ընկերության կողմից իրականացվող հանքարդյունաբերական համալիրի շինարարական աշխատանքները դադարացված են: Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման ԴՎ-245 պայամանագրի ժամկետները ավելացվել են 19 սեպտեմբեր 2022 թվականին, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 55.1 հոդվածը և «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության թիվ 143-Ն օրենքի 19-րդ հոդվածի 2 կետը:

«Լիդիան Արմենիա» ընկերությունը գտվում է վերաֆինանսավորման գործընթացում շինարարական աշխատանքները ավարտին հասցնելու և շահագործումը սկսելու նպատակով: Ընկերության շրջակա միջավայրի մշտադիտարկման աշխատանքները մեկնարկել են 2023 թվականի հունվար ամսից:

Ընկերությունը արդեն 2023 թվականի ապրիլ ամսին լիազոր մարմնին կներկայացնի 1-ին եռամսյակի մշտադիտարկման արդյունքների հաշվետվությունը:

Հարգանքով  
«Լիդիան Արմենիա» ՓԲԸ գործադիր տնօրեն  
Հայկ Արոյան

